«Երբ կինս ինձ ասում է՝ բոշա երեւանցի, ես էլ նրան ասում եմ՝ անորմալ ղարաբաղցի»,- ահա այս-

ՀԱԽՎԵՐԴՅԱՆԱԿԱՆ
արկածները Ստեփանակերտում

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

պես զարմանքի ու ծիծաղի ալիք բարձրացրեց Ռուբեն Հախվերդյանը՝ իրեն բնորոշ անտարբերությամբ ու հեգնանքով սթափեցնելով միապաղաղության սովոր ղարաբաղյան հանդիսատեսին: Ու թեեւ համերգից դուրս արված երգչի «ռեպլիկները», մեղմ ասած, այնքան էլ ականջ շոյող չէին, այդուամենայնիվ, Հախվերդյանի համերգը հանդիսատեսի համար եզակի այլընտրանք էր: Ու թերեւս դա էր պատճառը, որ, չնայած տոմսի բարձր գնին (1500 դրամ), դահլիճը լեփ-լեցուն էր: Իսկ Ստեփանակերտի համար որեւէ համերգի մոտ 400 հոգու ներկայությունն ավելի քան խոսուն թիվ է: Եթե համերգները մի քանի օր տեւեին, հաստատ պատկերը նույնը կլիներ. «Չնայած իմ սիրելի երգիչը ասում ա՝ իմ երգերը աղջիկներ-մաղջիկներ չեն լսում, այլ հասուն կանայք, բայց ես սաղ օրը նրան եմ լսում: Շատում սիրում, շատ լավ ա երգում»,- հմայված երգչի ստեղծագործություններով՝ խոստովանում է երգչի երկրպագուն՝ ուսանողուհի Մարիաննան, որն իր հեռախոսի վրա Հախվերդյանի «Բարի լուս, տիկին Արուս» երգն է դրել: Ի դեպ, համերգը կազմակերպվել էր Արցախի ՀՅԴ երիտասարդական թեւի նախաձեռնությամբ եւ «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի հովանավորությամբ: Ստեփանակերտի երիտասարդության պալատի դահլիճում կայացած համերգին մարդիկ եկել էին ժամանակից շուտ:

Բեմի «ձեւավորումը» հախվերդյանավարի էր. փոքրիկ սեղան՝ վրան ջրի շշեր, կիթառի տուփը, որի վրա երգչի ոտքերն էին հարմարված, եւ երկու երաժիշտներ, որոնք իրենց թավջութակով եւ ակորդեոնով նվագակցում էին երգչին: Միակ աչքի զարնող տոնական ատրիբուտը երգչի կարմիր գուլպաներն էին, որոնք երեւում էին նրա սեւ տաբատի ու սեւ կոշիկների արանքից: Առաջին իսկ րոպեներին Հախվերդյանը հայտարարեց, որ ինքը միշտ ուրախ է եղել՝ իր համերգին տեսնելով մարդկանց, այլ ոչ թե կառավարականների: Սա, բնականաբար, անհարմարություններ ստեղծեց դահլիճում ներկա գտնվող ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանի ու մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նորեկ Գասպարյանի համար, ովքեր ղարաբաղյան «մոլի կառավարականներ» են: Հետզհետե այդ անհարմարությունն անդրադարձավ նաեւ մնացածներին՝ լսելով, թե ինչպես իրենց սիրելի, ամենուր հեղինակություն վայելող երգիչը պարբերաբար նշում է, որ տանել չի կարողանում ներկա իշխանություններին՝ չվախենալով նշել «ղարաբաղցիներ» տերմինը: «Ես կարծում եմ, որ յուրաքանչյուր արվեստագետ պետք է ունենա իր քաղաքացիական դիրքորոշումը: Ես ոչ սովետի ԿԳԲ-ից եմ վախեցել, ոչ Լեւոնի ժամանակ, ոչ էլ նոր կառավարությունից: Ինձ չի հետաքրքրում կառավարական կարծիքը»,- հայտարարեց երգիչը: Եթե երկու խոսքով բնութագրելու լինենք Հախվերդյանի համերգը, պիտի նշենք, որ երգիչը տակնուվրա արեց ղարաբաղցի հանդիսատեսի անխռով ու միապաղաղ հոգին. ղարաբաղցիների առօրյայում գոնե մեկժամյա այլակարծություն մտցրեց՝ «քլնգելով եւ իշխանություններին, եւ Լեւոնին», ինչի վայելքն ուղեկցվեց բուռն ծափահարություններով: Եւ, որ ամենակարեւորն է՝ վերջում ներկաները ոչ թե հայ հանդիսատեսին բնորոշ կծպով համերգը չավարտված՝ արմուկով հավաքեցին իրերն ու դուրս եկան, այլ մեկ մարդու նման մնացին մինչեւ համերգի ավարտը: «Այս համերգից հետո անպայման պետք է գինի խմվի, ինչն էլ պատրաստում ենք անել: Ճիշտ ա, քաղաքականությունը շատ-շատ էր էսօր, բայց լավ էր, որովհետեւ Հախվերդյանը ճիշտը սիրող տղա ա, մենք շատ բաներում համամիտ ենք նրա հետ, չնայած ոչ բոլոր դեպքերում»,- զգուշության քողի տակ խոստովանեց ստեփանակերտցի Արայիկ Սողոմոնյանը: